

Hueyfneuf q.

2040

1919

3KN1(47925)

2-26

ՀԿՊ(47-98)

7-26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ  
КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ АРМЕНИИ № 4

Պրոլետարիատ բոլոր երկրների, ժիացլք!

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱ-  
ԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԵՐ-  
ԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

ԵՐՐՈՐԴ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՇԻՈՆԱԼԻՆ

Д О К Л А Д

Представителя Коммунистической Партии Армении на  
Конгрессе III Коммунистического Интернационала.

▶ 2001

2010

10327

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈԻՍՎՑՈՒԹԻՒՆ  
№ 4 КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ АРМЕНИИ № 4

ՅԿՊ(47.925)

3-26

ՎՃ

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք!

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱ-  
ԿԱՆ ԿՈԻՍՎՑՈՒԹԵԱՆ ՆԵՐ-  
ԿԱՅԱՑՈՒՑԾԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

100/29569

ԵՐՐՈՐԴ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՇԽՈՎՆԱԿԻՆ

### Д О К Л А Д

Представителя Коммунистической Партии Армении на  
Конгрессе III Коммунистического Интернационала.

ՀՐԱՏՐՎԱԿՈՒԹԻՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈԻՍՎՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ.  
ԹՈՍԿԱ—1919.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՈՒՅՉԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ Ա ԿՈՄՄՈՒՆԻՍՏ.  
ԻՆՑԵՐՆԱՅԻՈՆԱԼԻՆ.

ԸՆԿԵՐՆԵՐ.

Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեանը բաժին է հասել կրկնակի ու մեծ բաղդաւորութիւն։ Այսօր մեր կուսակցութիւնը տօնում է իր տարեդարձը, մտսնակցելով կամմունիստական կուսակցութիւնների միջազգային կօնդրեսին։

Հոկտեմբերեան պրոլետարական լեզափոխութիւնը մարդկութեան պատմութեան մէջ բաց է արել նոր դարաշրջան, մի երա, ուր իմադերիալիստական պատերազմները փոխում են քաղաքացիական կուների և որոնք իրենց հերթին անխռուսափելիօրէն տանելու են դէպի պրոլետարիատի լաղթանակը բուրժուազիայի վրա և հաստատելու են կոմմունիստական կարգեր ամբողջ աշխարհում։

Հոկտեմբերեան պրոլետարական լեզափոխութիւնը, որ թշնամի է ամեն տեսակ հալածանքի ու բռնութեան, մի շարք աղատազրական լօգունգների հետ միասին առաջ ժողովրդների ճշմարիտ, չխեղաթիւրւած ինքնորոշումը, և դրանց թւում նաև Հայաստանի ինքնորոշումը։

Հայաստանի ժողովուրդները առաջին անգամ ազատ շունչ բաշեցին և հնարաւորութիւն ստացան անկախօրէն տնօրինելու իրենց բաղդը։ Հայաստանի բազմաչարչար ժողովրդների կրծքից առաջին անգամ դուրս թռաւ ուրախութեան աղաղակը և ապագայ փառաւոր կեանքի գեղատեսիլ հեռանկարներն այնչափ որոշակի գծւեցին նրանց առաջ։

Սակայն ստեղծւում էր մի հսկայական վտանգ, որ բուրժուական, նացիոնալիստական կուսակցութիւններն օգտակար ինքնորոշման լօգունգից, աւելի և աւելի պիտի զարկ տային իրենց կործանարար քաղաքականութանը, աւելի ու աւելի պիտի բորբոքին ժողով, աղդայնական կրքերը, և ինքնորոշման դիմակի տակ ամբողջ երկիրը աղդայնական կուների ասպարեզ դարձնէին:

Ուրեմն հարկաւոր էր աղգային մեկուսացման, անջատման քաղաքականութանը հակադրել չայաստանի բոլոր ժողովուրդների աշխատաւոր մասսաների դասակարգային համախմբումը, աղգային բուրժուազիայի պատերազմը խեղդել և յայտարարել քաղաքացիական կուր յանուն շահագործւող և կեղեքւող դասակարգերի աղատադրման՝ անարդ կապիտալիստների, բեգերի և կնեազների լծից:

Հայաստանի կոմմունիստների առաջ, այսպիսով, զրւած էր մի պատասխանատու խնդիր, այն է, ճշդրիս որոշել իրենց գործունելութեան ընթացքը, ընտրել այնպիսի կազմակերպչական ու զիներ, որոնք աշխատաւոր զանգւածների ձեռքում, իսկապէս, ծառայէին որպէս գործնական զէնք նշմարիս ինքնորոշման համար և համապատասխանէին միաժամանակ յեղափոխական մարքսիզմի սկզբունքներին:

Այս նկատառումներով 1917 թ. նոյեմբերին, Հոկտեմբերեան պրոետարական յեղափոխութիւնից անժիշապէս յետոյ, Ռուսաստ. Սոց.-Դեմ. Բանւ. կուսակց. (բօլշևիկ) անդամների մի գրուպպա, Հայաստանցիներ, նախաձեռնութիւն ստանձնեցին քննութեան ենթարկելու բանորարական կուսակցութիւն ստեղծելու խնդիրը, առաջ բերելու մի կազմակերպութիւն, որը կարողանար հաւաքել իր շուրջը Հայաստանի բոլոր ժողովրդների պրոետարական և կիսապրոետարական էլեմենտները, որպէս հակադիր և կարող ուժ բուրժուական-շովինիստական կուսակցութիւնների հանդէպ: Մի շարք ժողովներից և դիստիւտներից յետոյ որոշեց ընկերներից մէկին ու դարկել Պե-

տերբուրդ Ռ. Ս.-Դ. Բ. Կ. (բօլշևիկ) կենտրոնական կոմիտէի մօտ, բանակցութիւններ վարելու և նրա սանկցիան ստանալու՝ Հայաստանի բօլշևիկների կուսակցութիւն կազմելու համար:

Ստանալով Ռ. Ս.-Դ. Բ. Կ. (բօլշևիկ) կենտրոնական կոմիտէի ստանկցիան ու համաձայնութիւնը 1918 թ. յունւարի վերջերին, մեր կազմակերպչական կոմիտէն փետրւարի կիսերին ձեռնարկեց իր յետագայ աշխատանքներին: Նոյն թւի մարտի 4-ին (փետր. 19) կուսակցութեան կենտրոնական կոմիտէն հրատարակեց առաջին մանիֆեստը, ուղղւած Հայաստանի ժողովրդներին, Հայաստանի կոմմունիստական կուսակցութեան անունից:

Հայաստանի կոմմունիստական կուսակցութիւն... III ինտերնացիոնալի մասնիկը, համաշխարհական սոցիալիստական կուսակցութիւնների մէջ առաջին կոմմունիստական կազմակերպութիւնը:

Դաշնակցական-մենշևիկական-մուսսովֆաթիստական բէակցիայի, հակայեղափոխութեան ամենածանր պայմաններում քաղաքական կուր ասպարեզ ելաւ Հայաստանի կոմմունիստական կուսակցութիւնը:

Բոու բժուական-նացիոնալիստական կուսակցութիւններն արդէն տանում էին աղգային մեկուսացման և «աղգային հանրապետութիւններ» ստեղծելու յանցաւոր և նենդ քաղաքականութիւնը:

«Աղգային հանրապետութիւններ», ուր պիտի թագաւորէին անշուշտ աղգային բուրժուաները, աղգային—բէգերն ու աղգային—կնեադները աւազակ իմպերիալիստների հովանուտակ... ծծելու նորից աղգային բանորների և չքաւոր գիւղացիների արիւնը:

«Աղգային հանրապետութիւններ», ահա մի նոր անպատկառ դաւադրութիւն:

Տիրապետող կուսակցութիւններն իրենց շովինիստական խելացնորութեան մէջ կորցրել էին ամօթի վերջին նշովն ան-

դամ։ Նրանց գլխաւոր թշնամին բօլշևիկներ և սրա դրոշակակիր Ռուսաստանի պրոլետարիատը։ Հարկաւոր էր, անշուշտ, աշխատաւոր մասսաների արիւն ու քրտինքը լափող բուրժուազիին ամեն ջանք գործ դնել, տապալելու իր ահաւոր թշնամուն, բանւորութեան և չքաւոր գիւղացիութեան շահերի միակ ու հարադատ պաշտպան—բոլշևիզմը։

Եւ բուրժուազիան, իր կեղտու նպատակներին հասնելու համար, միջոցների մէջ ոչ մի խտրութիւն չէր դնում։ Բոլշևիզմի գէմ կռւելու համար անդրկովկասեան մենցերկական-դաշնակցական-մուսսաֆաթիստական «դեմոկրատիան» պատրաստ էր զինակցութիւն հաստատել ում հետ էլ լինի, թէկուզ սատանայի։

Ցանձին չիւսիսացին Կովկասի հակայեղափոխական Ֆիլիմոնօվների, Պոլովցեների, Կարառուլօվների և այլ ցարական գեներալների ու սե-հարիւրեակալին վոնմակների, Անդրկովկասի հակայեղափոխութեան զոչիներ ու պարագլուխ պ. պ. Ժորգանիան, Գեղեցիորին, Մերեթելին, Քաջազնունին ու խմբակցութիւնը, աշխատաւոր մասսաների դաւաճան, ըենեզատ ու գեղին սոցիալիստների այդ անամօթ խմբակցութիւնը, դաւալ վերջապէս իր արժանի զինակիցներին։

Դահիճների և խուլիգանների սրբազն դաշնակցութիւն...

Չէ որ օրի վրայ հակայտկան ծաւալ ստացող յեղափոխական, սոցիալիստական շարժման զօրաւոր ուժն էր կազմում ուստական Կովկասեան բանտկը։

Չէ որ յեղափոխականացած ուստական զինւորները, զինած սոքից մինչև գլուխ, չէին թողնում «Անդրկովկասի գեմոկրատիալին», սոցիալ-աւաղակներին հանդստանալ իրենց դափնիների վրայ։

Հարկաւոր էր աղաւուել աանարխօ-բոլշևիկեան վարակումից... հարկաւոր էր դուրս վոնդել ուստական բանակն Անդրկովկասի սահմաններից։

Եւ ահա մենշեկի Փորդանիալի հրամանով կատարւ ում է

մի զսւած ոճրագործութիւն։ լարւում են որոգայթներ և սկսւում դաւադիր յարձակումներ, զինաթափ անելու յանկարծակիի եկած միամիա զօրքերը։

Զինաթափի...

Ուր թափւում է հազարաւոր ուստական զինւորների անմեղ արիւնը. այն զինւորների, որոնք իրենց արիւնով ներկել են Կովկասեան ծակատի ամեն մի քարը իմպերիալիստական պատերազմի մի քանի տասնեակ ամիսների ընթացքում... Զինւորներ, որոնց զաւակները, բոլորն ու մալրերը կարօտով ու ցաւով նրանց վերադարձն էին փայփայում երկար տարիներ։

Յեղափոխութեան բիւրաւո՞ր զոհեր, որ նորոգ կեանքի գարունն էին տենչում և նահատակ մանը ժողովրդների ազատագրման վիշտ ուղիները մաքրում։

Անողոր ճակատագրի կամ օրհասի կամքը չէր, որ Շամխորը ներկւեր հազարաւոր անմեղների արիւնով։

Մուղանի անապատի թունաւոր օճերը մենշեկի Ժորգանիաների վիժւածքն էին անշուշտ։

Ժորգանիա. մենշեկիմի սիմվոլը, անարդ արարած, որ անապատներում օճեր է սնում...

Եւ զարմանալի չէ, որ Ռ. Ա.-Դ. Բ. Կ. (բոլշևիկ) կողմից բողոքի փորձերն անդամ առաջ են բերում բէակցիալի նոր ուժեղացում։ Մկաւում են խուլիգարկութիւններ ու մերբակալումներ «անարխօ-բոլշևիկեան խոռվարար զօրքերի»։ Բանտերը լցւուծ են նրանցով։ Լաւագոյն ընկերները ծգւում են խոնաւնկուղները։ Բանտերական մամուլը խեղգւում է։ Բեպրեսիաներն ու հալածանքները յեղափոխութեան դէմ պսակաւորում են Անդրկովկասեան սէմիթի բացմանը՝ բանւորական միտինդի գնդակահարութեամբ։ Թիֆլիսի Ալեքսանդրիան այդում, վետրւարի 10-ին, երբ գարնանաշունչ պարտէղի նորարուս կանաչը բոլշևիկ ընկերների արիւնով ցօղւեց։

Հակայեղափոխութեան դաւադիր քաղաքականութեամբ մասնաւորապէս աւելի անտանելի պայմաններ ստեղծւեցին այն

շրջաններում, ուր խառն բնակւած էին հայ-թուրքական աղ-գարնակութեամբ: Հայկական բուրժուական գաշնակցականները մի կողմից, և թուրքական բէկերի կուսակցութիւն—Մուսսա-ֆաթը միւս կողմից, բայց բաց ազգային կոտորածների պրոպա-գանդա էին անում: Եւ այդ շէլթանների վրդմամբ հայերը մորթում էին թուրքերին, թուրքերը հայերին:

Եղբայր եղբօր դէմ:

Ու հոսում էր միայն հայ աշխատաւորի և թուրք չքաւոր գիւղացու արիւնը. այս անգամ ևս յանուն ժողովրդի թշնամի բէկերի ու բուրժուանների, որոնք անպատկառ ժայխանները դէմ-քերին, հանդիսատ բազմած պալատների մէջ, արդէն միատարր ազգութիւններից բազկացած շրջանների տանձաններն էին քա-շում...

Թունաւորելով երկու եղբայրական ժողովրդների զանգ-ւածները, կրակի և սրի ճարակ դարձնելով բազմաթիւ գիւղեր, հայ բուրժուազիային ծախւած գաշնակցականները և թուրք բէգերի ամանները լիզող մուսաֆաթիստները դեռ ևս շարու-նակում էին նսաել իրար կողքի, միենոյն կառավարութեան մէջ, ի հարկէ ամբողջ ժամանակ դաւեր նիւթելու իրար դէմ:

Եւ պալատներում լարւած դաւերը միշտ անդրադառնում էին զառնօրէն աշխատաւոր մասսանների վրայ: Արթնացող թուրք գիւղացիութիւնը և յեղափոխութեան շարքերը դիմող հայ աշխատաւորութիւնն այլպիսով բժանում և կոյր գործիք էին դառնում իրենց բարեկամ ձեւայոլ շէլթանների ձեռքում:

Մինչ շէլթանները, իրենց շահերի համեմատ երկու անհաշտ բանակների բաժանւած, տարրեր գահիններում խնչոյքի նստած, զինու բաժակները ձեռքերին, զալերի նման լավում էին հայ և թուրք աշխատաւորների արիւն քրախնքը, և դիւական քրք-քիններ արձակելով, միաժամանակ, թէև տարրեր աեղերում, կանչում էին արքած.

— Բաժանի՛ր, որ աիրես:

Ներքին հակալեզափութեան պաակերը կարէի և լրացնել

այն արտաքին քաղաքականութեամբ, որ վարում էին աիրա-պետող կուսակցութիւնները: Սկսած էր մի պոռնիկ քաղա-քականութիւն, չարչիական առետուր տանկական ֆէողալների հետ, կատարեալ վակիսանալիա, որից զլանքով երես պիտի դարձնէր ամեն մի քիչ թէ շատ ազնիւ «գեմոկրատ»:

Իրենց սոցիալիստ համարող պ.պ. մենշևիկներն սկսել էին գաղանի բանակցութիւններ, փոտած զիւանազիտութիւնը, մա-շելով անվերջ գիւղոմատների գոները և քաշի գնելով կուող իմագերիալիստ կառավարութիւններին, նժարի ծանր կողմն ան-ցնելու համար:

Եւ մինչ թուրք բէգերի կուսակցութիւն Մուսաֆաթը լիափորէն քրքիչներ էր արձակում տանկական ֆէողալիզմի ա-ռաջսաղացումով և աւելի ու աւելի սանձարձակ դառնում, բնդունելով հրամայողական տոն, գանաճ Զիւնկելիները հերհե-վագում էին Տրապիզոն, սիրաշահելու սուլթանական փաշանե-րին, Վիլհելմեան գեներալներին և դաւանանօրէն Բաթումը նրանց ծախելու, որ այնուհետև առանց պատկառելու յայտա-րարէին, թէ Բաթումը յանձնւած է տանկիներին Խորհրդակին Խուսաստանի կողմից:

Իսկ սոցիալ-մենշևիկ Գեղեչկորին, Ծերեթելին ու խմբակը. ինչպիսի ողորմելի կատակերգութիւն էր, որ խաղում էին նրանք: Աշխատաւոր մասսանների աչքին թող փչելու համար կուսակցական ժողովներում նրանք անխնայ կերպով յարձակում էին Զիւնկելու վրայ և յայտարարում, թէ այդ ամենը Զիւն-կելու դաւանանութեան արդիւնքն է. թէ իրենց կուսակցու-թիւնը լենւում է միայն ուստ զեմոկրատիալի վրայ և չի նա-նաշում մի այլ օրիէնտացիա:

Օձացին անմեղութիւն:

Վրաց կնեազների շահերը պահանջում էին, անշուշտ, որ սրտակից բարեկամ Ծերեթելիները, Զիւնկելիներն ու Գեղեչկո-րիները մասսանների առաջ մի առ ժամանակ հայնոյէին իրար, որպէսզի վրաց բանորութեան և գիւղացիութեան հանդէալ

կատարւած դաւագրութիւնն աւելի շուտ պսակւէր յաջողութեամբ: Եւ զարմանալի չէ մեզ համար, որ լարախազաց Գեգեկորիները, Զխէիձէներն ու Ծերեթելիները այնքան եռանդուն և յաջողութեամբ կատարում էին իրենց մէջ բաժանւած դերերը:

Իսկ ինչ էին անում խղճուկ դաշնակցականները... Նոյն պոռնիկ քաղաքականութեան բեմադրութիւնը, բայց աւելի ցինիկ ու աւելի անշնորհք գերակատարութեամբ: Ահա մէջ տեղ է վաղում դեռ երեկ յարին ներբող կարդացող դաշնակցական սոցիալիստ Խափսովը, որը հայ «աշխատաւոր մասսաների» անունից այսօր բանակցութիւններ է վարում տաճիկ փաշաների հետ: Եւ մինչ Օտառմանեան ֆէոդալիզմի հօրդաներն առաջ էին խաղում և դաշնակցականների մի թեր սրբազնն կռւի ահազանգն էր խփում, իրեւ թէ պաշտպանելու ճակասոր թշնամուներս խուժումից, միւս կողմից Տրապիզոնում և ապա Բաթումում, հէնց նոյն դաշնակցութեան արժանի ներկայացուցիչներ Խափսովն ու Քաջազնունին, փաշաների հետ նստած, թիկունքից հարւածում էին հայ բանորութեանն ու գիւղացիութեանը:

Եւ տարօրինակ չէ, որ յաղթական իմպերիալիզմի թելագրանքների տակ, հայ բուրժուազիայի լակէյ սոցիալ-դաւանան դաշնակցութեան կամքով, ֆրոնտը քայլայում և քաղաքները արւում էին թշնամուն իրար եւելից: Յոխորտացող հայ նացիոնալիզմի զօրքերը, կազմալումծան ենթարկւած փախուստի էին դիմում փոքրաթիւ թշնամու առաջ:

Կատարելով պատմութեան մէջ չտեսնւած այդպիսի դաւանանութիւն, պատճառ դառնալով ահաւոր կատաստրօֆալի, Դաշնակցութիւն կոչւած մարդուկների խմբակցութիւնը պէտք է արդարանար մասսաների առաջ: Այդպիսի դէպքերում, ամեն անդամ, ի հարկէ յանցաւոր էր բօլշէկոմը, բուրժուազիայի անյաղթելի թշնամին, որից մինչև այսօր քուն և դադար չունին համաշխարհային իմպերիալիստները և դեղին սոցիալիստները:

Եւ նորից ու նորից լսուում է սոցիալ-լուգաների շրթունքներից հազար անգամ անիմւած բօլշէկոմը, որ լսէք, մուտք կը գործել հայ զօրքերի մէջ և քայլայել նրանց շարքերը:

Ողորմելի՛ արդարացում... որ միայն միամիտներին կարող էր համօղել, իսկ այսօր, հաղիւ թէ գտնւի հայաստանցի մէկ հայ աշխատաւոր, որ հաւատալ նրանց՝ այնչափ դառն ու երկար փորձերից յետոյ:

Բօլշէկոմն Անդրկովկասում և Հայաստանում—դա աշխատաւոր գասակարգերի միակ ներկայացուցիչն էր: Բօլշէկոմը—բանւորութեան և գիւղացիութեան այն կուռ միութիւնն էր, այն հղոր ուժը, որի հարւածների տակ պիտի փշրւէր ժողովուների ստրկութեան շղթան, որի հարւածների տակ պիտի խորտակւէր ազգային բուրժուաների, կնեազների ու բէկերի անարգ լուժը, և որի զրոնի առաջ ամօթահար փախուստի պիտի դիմէին սուլթանական աւազակախմբերը:

Բօլշէկոմը, Անդրկովկասի ու Հայաստանի աառավող ու արնաքամ ժողովրդների ազատազրման սիմվոլն էր. և աշխատաւոր մասսաները զգում էին այդ. սիրում ու կապւում նրա հետ:

Եւ սոցիալ-պատրիոտ մենշէկոմը, դաշնակցութիւնն ու մուսաֆաթը այդ չէին կարող հանդուրժել: Զէին կարող տանել, որ իրենց թունաւոր մթնոլորդից զուրս, իրենց քթի տակ բարձրանում է մի յաղթական ամրոց, կարմիր Բագուն, բանւորութեան և գիւղացիութեան փրկութեան փարոսը:

Կարմիր Բագուն... ուր յեղափօխական սոցիալիզմի փառակեղ զրօշն էր ծածանում, ուր խորհուրդների իշխանութեամբ Անդրկովկասի աշխատաւորութեան և Ռուսաստանի պրոլետարիատի եղբարական զինակցութիւնն էր կնքւում:

Սի՞՝, հերոսական Բագուն Անդրկովկասի այն կարմիր քաղաքն էր, որի պայման գոյնից գիւղադադար էին լինում մենշէկի և մուսսաֆաթ ցուլերը:

Ու կատարում է գարծեալ մի նոր դաւանանութիւն բանւորութեան և գիւղացիութեան հանդէպ:

Զիւէիծէն, Գեգեչկորին, Ժորդանիան ու խմբակը, գաղտնի համաձայնութեան գալով թուրք բէդերի հետ, կազմակերպում են մի լուռ արշաւանք Բագւի դէմ: Թիֆլիսի արսենալը, որ շարունակ փակ էր և «զատարկ»—ֆրոնտը պաշտպանելու սուլթանիդի հօրդաներից, այժմ բաց ու առաս զինում է դաւադիր խմբերը. միլիոնաւոր փամփուշաներ, հրացան ու պուլեմեռու արւում են աւազակախմբերին, Բագւի դէմ ուղղելու: Զրահապատ զնացքները, մենշեիկեան մի շարք զնդեր գաղտադողի միանում են կողոպուտի տենչերով փառած աւազակախմբերին և թաքուն արշաւում դէպի Բագու, այն ժամանակ, երբ Բագւի պրոլետարիատը քաղաքացիական կոիւների մէջ շարդելով հակայեղափոխական ու ժերը, սոցիալիստական յեղափոխութեան դրօշը պարզելով, Կովկասեան ժողովրդների վաղւան վարդաշող կեանքի առաւօտն էր դարբնում:

Հերոսական Բագւի դէմ կատարւած գաւանանութեան մէջ աւելի քան մեղսակից է իրեն յեղափոխական անւանող դաշնակցութիւնը, այսահուած հոգիների այդ կոնգրումերատը, որ սիրում է շարունակ բռվանդակ հայութեան անունից և հայ ժողովրդի «Փիղիքական գոյութեան» մասին հառել: Մինչ Բագւի հայ պրոլետարիատը ուուս, թուրք և այլն եզրացըների հետ կուրծք էր տալիս բանւորագի զացիական իշխանութեան թշնամիների դէմ, և հայ բանւորութեան ճնշման տակ Բագւի դաշնակցութեան կոմիտէն կուսակցութեան շէֆ Ռոստոմի դեկաֆարութեամբ նվճում էր ապացուցել, որ հաւատարիծ գաշնակից պիտի հանդիսանալ Խորհուրդների իշխանութեան, որպէսդի կրկին մոլորեցնի հայ աշխատաւորութեան և հնարաւորութիւն ունենայ խաղաղ թուրք ազգաբնակութեան բնաշնչման դիւական ծրագիրը իրագործել և ապա անամօթաբար Բագուն անդիսցիներին վաճառել, կորստի մատնելով պրոլետարիատի ամենափայլուն ներկայացուցիչներին՝ Շահումեան, Զափարիձէ, Պետրով և այլն, յանուն հայ միլիոնատէր Մանթաշեների. մինչ թւում էր, որ ժերես «Երիտասարդների» աղդեցութեան տակ

դաշնակցութիւնը ստիպւած լինի մեղմել իր պոռնիկ քաղաքականութիւնը, մենք տեսնում էինք որոշ, որ հայ բուրժուազիակին ծառայող դաշնակցութիւնը մասնակից էր Բագւի դէմ տարւող լուռ և դաւադիր աշխատանքներին: Եւ յետագայ փաստերը եկան համոզելու հայ աշխատաւորութեանը նոյնպէս:

Այն ժամանակ, երբ տաճկական առաջխաղացման վերայ Բագւի հայ պրոլետարիատը սարսափով էր նայում, դաշնակցական Միշա Արզումանովները կուսակցութեան որոշմամբ առաջնորդում էին տաճիկ փաշաներին դէպի Բագու: Իսկ Բագւի դաշնակցականներն երեսանց պաշտպանելով Խորհուրդները, դաղտնի յարաբերութեան մէջ էին մի կողմից գերմանօ-տաճկական, իսկ միւս կողմից անդիսական խմակերիալիստների հետ:

Եւ դաշնակցութեան այդ լիտի խաղերի հետեւանքով, ինչպէս միշտ, այնպէս էլ հիմա, տուժեց հայ աշխատաւորութիւնը, տալով 30000 զոհ:

Երեսուն հազար...

Որքան անարժէք այն 300,000 և 500,000 զոհերի դիմաց, որ տւել է թիւրքահայութիւնը դաշնակցութեան աւանտիւրիստական և կարճատես քայլերի հետեւանքով:

Ի՞նչ փոյթ դաշնակցութեան համար, որ հայաստանը գատարկւում է հայերից: Հայ ժողովրդի Փիղիքական բնաշնչման կուսակցութիւնը երազում է միայն հայաստանի ազատ հանքերը և հարստութիւնները հայ ազատ բուրժուազիալի համար... Հայաստանը առանց հայ աշխատաւորութեան, այդ այնքան էլ մտատանջութիւն չի պատճառել հայ բուրժուազիալին, հայ դաշնակցութեանը և «հայասէր» անդիսական ու ամերիկական իմպերիալիստներին: Հայ բուրժուազիալի կապիտալը երազական պետութիւնների հովանու տակ չափազանց զօրեղ է, իսկ հայ բուրժուազիալի Փիղիքական դոյութիւնը ամեն դէպում էլ վտանգից աղատ:

Եւ որքան կանգուն է հայ բուրժուազիան և լինրա քսակը, այնքան հայ դաշնակցութիւնը կարող է լոփանալ հայ աշխատաւորութեան արիւնով...

Ահա՛, ալսպիսի ծանթ քաղաքական պայմաններումն էր, որ հրապարակ իշաւ չայստանի կոմմունիստական կուսակցութիւնը, չայստանի աշխատաւոր գասակարգերի նշմարիտ բարեկամը:

1918 թ. փետրւարի 19-ին առաջին մանիթեսովի հետ հրապարակելով իր կենդրոնական օրգան «Կարմիր Օրերը», մեր երիտասարդ, պրոլետարական կուսակցութիւնը բազմաթիւ փաստերով մերկացրեց բանորութեան և քաւոր գիւղացիութեան առաջ սոցիալ-մենշերին սոցիալ-բէկերի և սոցիալ-դաշնակների շովէն ու դաւաճան քաղաքականութիւնը: Եւ դրանց հակադիր պարզեց կոմմունիզմի ծրագիրը, բաց արաւ սոցիալիստական յեղափոխութեան կարմիր հորիզոնը:

Ամեն հայնոյանք ու հայածանք մեր դէմ. «Կարմիր Օրերի» և «Կարմիր Դրօշակին փակումը, տպարանի կնքումը և մեր շինութիւնների խլումը, եկան աւելի ուժեղացնելու մեզ:

«Կարմիր Օրերի» տարածումը, որ սկզբնական շրջանում հասնում էր ընդամենը 250—300 օրինակի, ընդունեց միանգամայն անսպասելի չափեր հայ իրականութեան մէջ՝ 3000—35000 օրինակ միայն Թիֆլիզում, բայց արձակ մրցելով գաշնակցանների մութ «Հորիզոնի» հետ: Բոլոր փողոցներում խումբնում հայ զինորները և բանորները կարգում ու տարածում էին կոմմունիստական «Կարմիր Օրերը»: Ալեքսանդրոսովից, Շուլավէրից և այլ տեղերից յատկապէս գալիս ու անծամբ տանում էին մեր թերթը, որովհետեւ մենշերիկ ու դաշնական բռնակալները ոչնչացնում էին իրենց ծեռքն ընկած թերթերը: Լուսայ գիւղացիութիւնը գիւղացիւղ տարածում էր «Կարմիր Օրերը» և հրանում նրա յեղափոխական, խիզախ տոնով: Երևանը, Սխլցխան, Կարսը, Փոթին, Սուխումը, Բաթումն ու Բագուն թերթ էին պահանջում: Ուուսաստանի կոմմունիստական կուսակցութեան Բագւի կոմիտէն տարածում էր հայ բանորութեան մէջ չայստանի կոմմունիստական կուսակցութեան օրգան «Կարմիր Օրերը». Բագւի հայ պրոլետարիատը սպառում էր մեր օրգանի բոլոր համարները:

Օդեսսալից, Ղրիմից, Սիբիրից ևկած հայ նացիսնալիստների գնդերում, նախ գաղտնի և ձրի, իսկ յետոյ ազատ ու վճարով մուտք էր գործում «Կարմիր Օրերը» հարիւրաւոր օրինակներով ամեն օր, յեղացրում նրանց մտաւոր և հոգեկան աշխարհը, դաստիարակում նրանց կոմմունիզմի լուսաւոր գաղափարներով:

Մէկ ամսաւայ ընթացքում չայստանի կոմմունիստական կուսակցութեան կենտրոնական Օրգանը գրաւել էր արդէն բանուրական, զինւրական և զիւղացիական մասսաների համականըը և գարծել նրանց ամենօրեայ անբաժան ու սիրելի ընկերը:

«Կարմիր Օրերը» հեղինակութիւն էր նրանց համար:

Բազմաթիւ թղթակցութիւններ տեղում էին մեր խմբագրութիւններ, որի համեստ ու ընդարձակ սենեակը միշտ լին էր զինւրաներով ու բանուրաներով: Երեկոյեան ամենըն անհամբեր սպասում էին թերթի լոյս տեսներուն և հաւաքւում խմբագրութեան առաջ: Այսպիսի յաջողութիւնից յետոյ գարմանալի չէ, որ ասենք, թէ խմբագրութեան վերջին համարն էլ տանում էին: Մի չտեսնեած հետաքրքրութիւն չայստանի կոմմունիստական թերթի շուրջը:

«Կարմիր Օրերի» հետ միասին աւելի ու աւելի բազմամարդ ու կենդանի անցնում էին մեր դասախոսութիւնները և ընդհ. ժողովները: Կարճ ժամանակի ընթացքում կուսակցութեան անդամների թիւը հասաւ մի քանի հարիւրի միայն Թիֆլիզում: Իսկ սեփական զէնքերով զինւած թռուցիկ խրմի անդամների թիւը 300-ի: Սրանց հետ մէկտեղ պիտի լիշել այն հաղարաւոր համակրողներին, որ խմբւած էին կուսակցութեան շուրջը:

Ապրիլ ամսաւայ ընթացքում Թիֆլիզի մէջ զսնւած բոլոր հայ զօրամասերն, արդէն, կապւած էին չայստանի կոմմունիստական կուսակցութեան հետ: Կուսակցական ընկերների վազօրոք մուտք գործելը զօրքերի մէջ, նրանց հետ ապրելը,

Նրանց հետ ընկը և ընկերների վարած եռանդուն պլուզագանդան-  
դան տւին փայլուն արդիւնքներ: Դաշնակցականների ենթա-  
սպայական դալրոցը, շնորհիւ մի շաբք ընկերների, կապւեց  
մեզ հետ. պուլեմեռուները, ուռմբերն ու գէնքերը միշտ կարող  
էին տրամադրւել մեր կուսակցութեան: Հաւլաբարում և Օր-  
թաճալայում գտնաւած պահեստի գնդերն ու թնդանօժածիզները  
մեզ մօտ ուղարկեցին իրենց ներկայացուցիչները: Մենչև իկների  
կառավարութեան ունեցած բոլոր օվամօրիկները պիտի ան-  
ցնէին մեզ մօտ ապստամբութեան ժամանակ: Թիֆլիզի մի  
շաբք քաղաքամասերի միլիցիոններները սպասում էին մեր կար-  
գադրութեան:

Որպէս ամենափայլուն ապացուց հայաստանի կոմմունիս-  
տական կուսակցութեան անմանը և ուժեղացմանը, լիշենք,  
որ Թիֆլիզի արսենալի մօտ դասաւորւած 4000 թիւրքահայ  
դինորներն ապրիլի վերջին, օրը ցերեկով միտինդի եկան մեր  
կուսակցութեան հրաւերով: Միախնդր, ուր հանդէս եկան  
միայն հայաստանի կոմմունիստ. Կուսակցութեան հոեստորները,  
միաժամ ընդունեց մեր կենտր. կոմիտէի առաջարկած րէզո-  
լիցան, «Կորչի՛ Սնդրկովկասեան սէմքը, կեցցէ՛ Խորհուրդների  
իշխանութիւնը, կեցցէ՛ Խուսաստանի պրոլետարիատը, կեցցէ՛  
III Ինտերնացիոնալը, կեցցէ՛ հայաստանի կոմմունիստական  
կուսակցութիւնը» լոգունդներով:

Մենչև իկների և դաշնակցականների ձեռք առած բոլոր  
պրօվակացիոն միջոցները և սպառնալիքները, մինչև իսկ զրահա-  
պատ գնացքների շարժելը, չտնեցան և ոչ մի աղդեցութիւն,  
և միտինդր, շրջապատած հայաստանի կոմմունիստական կու-  
սակցութեանը համակրող ու հաւատարիմ դինւած գնդերով,  
անվեհեր շարունակեց իր աշխատանքը և բարձրածախ ասաց  
իր հեղինակաւոր խօսքը:

Ողեսրութեանը չափ չկար, յեղափոխական շարժումը  
հասել էր այնպիսի չափերի, որ մեր գորախմբերը, ինքնաբերա-  
բար, հայաստ. կոմմուն. կուսակց. Թիֆլիզի կոմիտէի անդամ

սպայ ընկեր Շ.ի զեկափարութեամբ շրջապատեցին արսենալը  
և խլեցին թուրքերին արւած հակաբական քանակութեամբ  
փամփուշտները, որ մենշևիկները պատրաստում էին Բագրէ  
դէմ ուղեկը Մեր զին որ ընկերները փողոցներում յաճախ,  
տներկիւղ, զինաթափ էին անում հակաբագափոխականներին:  
Մերոնք խումբ-խումբ, զինւած հրացաններով և ոռոմերով,  
անվախ շրջում էին քաղաքի փողոցներով և թշնամական ցոյ-  
ցեր անում հայոց աղգալին և հայաստանի Ապահովութեան  
Խորհուրդներում:

ԶԵՐԸ

Թիֆլիզից հայ զօրքերի մէջ եղած արամագրութիւնն  
անցնում էր գաւառ. այսպէս, Ալէրսանդրապոլից մի ամբողջ  
գունդ ուղարկեց իր ներկայացուցիչը՝ կապւելու հայաս-  
տանի կոմմունիստական կուսակցութեան հետ: Ախլցխափից  
Բանւոր. և Զինւոր. Խորհրդի նախագահ ընկ. Ի. յաշտնում էր,  
որ հնարաւոր է իշխանութիւնը վերցնել: Կոււայ ընկերները  
յախարարում էին, որ Թիֆլիզի ապստամբութեան զէպում  
յեղափոխական գիւղացիութիւնը հաղարներով կիշնէ սարերից  
և կհոսէ զէպի Անդրկովկասի մայրաբազարը: Սուխումից  
եկած ընկերները պնդում էին իշխանութիւնը վերցնել և խրնդ-  
րում էին պրօվականդիստ ուժեր: Կուսակցութեանս կենորուն.  
կոմիտէն ուղարկեց այնուել իր անդամներից ընկեր Վ. Ե.-ին  
և 2 պրօվականդիստ, ընկերներ Ռ. և Ա.-ին հայ զօրամասերը  
կազմակերպելու և զէնք փոխադրելու համար, Տուապսէ և  
Նօվօրօսիյսկ ուղարկեց կենոր. կոմիտէի ներկայացուցիչ ընկեր  
Յ.ն, իսկ կենար. կամիտէի անդամ ընկեր Յ.ն Մօսկվա:

Կուսակցական մարմիններ կազմւեցին նաև Բաթումում,  
որտեղից մեր ներկայացուցիչ Շ.ն ստիպւած էր դաշնակցական-  
ների մահւան սպառնալիքների տակ զիշերով խոյս տալ Փօթի և  
ապա Թիֆլիզ: Կարսում դաշնակցականների կողմից ձերբակալ-  
ւեց կուսակցութեան ներկայացուցիչ ընկեր Գ.:

Առանձին եռանդ էր թափում Ալէրսանդրապոլի կոմիտէն.  
երեանի հետ կապը հասաւաւած էր, լժէւ մէծ զժւարու-

թեամբ՝ «Կարմիր Օրերը» հասնում էր այնաեղ. երիտասարդ կուսակցութիւնը մուտք էր գործել ամենուրեք և մասսանների ուշադրութիւնը հրատիրել իր կողմբ:

Կոմմունիզմը չտեսնւած. հսկայական նւանումներ էր անում Անդրկովկասում և Հայաստանում աշխատաւոր մասսաների մէջ:

Վրաստանի մի շարք գաւառներում անդադար բռնկում էին գիւղացիական ապստամբութիւններ, որոնք, աւաղ, առանց ղեկավար կենդրոնի, ցար ու ցրիւ, խեղդում էին մենշեկինների սպիտակ գվարդիայի կողմից:

Լօռւայ հայ գիւղացիութիւնը կազմել էր Լօռւայ հանրապետութիւնը:

Յարաբերութիւններ մշակւած էին Հայաստանի Կոմմունիստական կուսակցութեան և Օսետինական «Կերմէն» կաղմակերպութեան հետ:

Մեզ հետ կազ էին հաստատում ծախակողմեան սոցիալիստ-կեղափոխականների և անարխիստների գրուպպան:

Բագւի հետ մեր կուսակցութիւնը պահպանում էր սերտ կապ, որտեղից ստանում էինք հրահանգներ և նոր գրականութիւն. Եւ Հայաստանի Կոմմունիստական կուսակցութիւնն իր հերթին ռադիոյով հաղորդում էր Բագու իրերի կացութիւնը և աւաղակախմբերի առաջխաղացումը:

Ահա այսպէս ապրիլի վերշերին և մայիսի սկզբների բարենպաստ պայմաններում, երբ մթնոլորդը էլեքտրականացած, Թիֆլիզի ամբողջ աղդաբնակութիւնը սպասում էր ժամ առ ժամ, որ իշխանութիւնը պիտի անցնի բոլշևիկներին, և երբ ժւռում էր, որ մի գիշերաւ ընթացքում Անդրկովկասի մայրաքաղաքը առանց արիւնհեղութեան անձնատուր պիտի լինի կոմմունիստական շարժմանը և Կարմիր Բագուն պիտի միանայ Թիֆլիզի հետ, այնքան երկար չանքերից և լարւած դրութիւնից յետոյ, ափսո՞ս, մեր ուժերը սկսեցին լուծւել և տեղի տալ, չնորհիւ մի շարք ներքին և արտաքին պատճառների,

որոնց մէջ կարեսր տեղ են գրաւում Թիֆլիզի ամենապատասխանաւութիւնն մուտքելիկ ընկերների անվճռականութիւնն ու տատանումները, որ մենք այսօր, ստիպւած ենք վերստին խոստովանել:

Անկասկած է, որ մասսաները հրապարակ հանեցին աւելի յեղափոխական թափ ու կորով, քան նրանց երերուն դեկավարները:

Մենշեկները տեսնելով այդ ամենը և կանխելով սպառնացող վտանգը, շրջապատեցին Թիֆլիզը սպիտակ գւարդէականներով, թնդանօթներն ու պուլեմետները հապճեպ շարեցին մօտակայ բարձրութիւնների վրայ, զրահապատ գնացքները բերին կայարան:

Նկատեց կարմիր զօրամասերի մաս առ մաս զինաթափութիւնը և ուժեղ հալածանք ակտիւ ընկերների դէմ, որոնցից շատերը սովորեցան թագնւել, կամ թէ ապաւինել Հւեսիսացին Կովկաս, որ ապա, գառն փորձերից խրատւած, կազդուրւած ուժերով վերադառնան Թիֆլիզ:

Այսպիսով սոցիալիստական շարժումն Անդրկովկասում և Հայաստանում առ ժամանակ տեղի տւեց, չընդունելով ակտիւ, քաղաքացիական ընդհարումների բնոյթ. յեղափոխական Բագուն իր հերոսական կուի մէջ մնաց միայնուի:

Մենշեկներն ու նացիոնալիստները խրախուսւած էժան յաշողութիւններով, սկսեցին սպիտակ տերրոր կոմմունիստների դէմ, որոնցից շատերը բանդ էին նետում, կամ թէ բանդ տարւեիս զնդակահարւում էին գաւաճանաբարար:

Թէև բռնութիւններն ու հալածանքները հասել էին անասելի չափերի, սակայն մեր ընկերները, անցնելով գաղանի, սաորերկեայ աշխատանքի, մինչև այսօր էլ տանում են իրենց կոմմունիստական գործը, ամենածանը և նիւթական ամենազգւար պայմաններում. հրատարակում են իլլեզալ թերթեր ու թուոցիկներ, այն խոր համոզմամբ, որ ամենամօտ ապագայում պիտի կազմալուծւի նոյնպէս անգլօ-ամերիկական իմպերիալիզ-

մը, որ Խորհրդավին Ռուսաստանը յաղթական գաշնակից ու հզօր նեցուկ պիտի հանդիսանալ Վրաստանի ու Հայաստանի ապստամբող աշխատաւոր մասսաներին, հաստատելու այնտեղ բանւորա գիւղացիական կառավարութիւն:

Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան աշխատանքների շարքին կարելի է աւելացնել նաև Կենտր. Կոմիտէի կողմից ուղարկւած ընկերների և Ռուսաստանի կոմմունիստների շանքերով մենշևիկական իշխանութեան խորաակումը և Խորհուրդների իշխանութեան հաստատումը Սոխում քաղաքում և իր շրջանում:

Այնուհետեւ Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի մի շարք անդամների շանքերով խորտակւեցին բոլոր ազգավին կոմիտէները Հիւսիսային Կովկասում. «գաշնակցութիւնը» միանդայան դուրս մղեց բանւորագիւղացիական մասսաների միջից:

Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութիւնը տւեց 3 ժողովրդական կոմիտարներ Հիւսիսային Կովկասի Սոյիալիստական Հանրապետութեան, զբանք են՝ ներքին դործոց, ֆինանսների և ազգութեանց:

Բաղմաթիւ ընկերներ աշխատում էին տեղերում Ռուսաստ. Կոմմունիստ. կաղմատկերպութիւնների և Խորհուրդների մէջ:

Արմաւիրում Հայաստանի Կոմմունիստ. Կուսակցութիւնն ունեցաւ մի ծանր զոհ, յանձին ուսանող ընկերոջ, որը քաղաքացիական կուտի ժամանակ ընկաւ զէնքը ծեռքին, շնորհւաելական հայ բուրժուազիակի գաւազրութեան:

Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան ակտիւ և ռազմատենչ ընկերների շանքերով Պետքորակում կազմւեց հայկական կարմիր գունդ ընկեր Լենինի անւան, որի մի մարդուած փաշար կուտի զիմեց Դենիկինի բանդաների դէմ, ուր և ունեցաւ մի շարք զոհեր: Վաշար զինւորներից մէկը իր ցուց տւած հերոսութեան համար կարգեց ռուսական մի ամբողջ գնդի հրամանաստար:

Յակտնի դաւանան Սարօկինի աւանտիւրայի ժամանակ, երբ զոհ գնացին ուժեղ կոմմունիստական դէմքեր և իշխանութիւնը մի քանի օրով անցաւ լիշեալ բանդիտի ծեռքը, հայկական Լենինի անւան գունդը, իր առաջնորդ ընկեր թէ-ի զեկավարութեամբ մինչեւ վերջ հաւատարիմ մնաց Խորհուրդների իշխանութեան և այդ կօշմարային օրերում պահպանեց ազգութիւնների կոմիտարիատը և հիւսիս. Կովկասի կենտր. զործադիր կոմիտէի պրիզիդիտումի անդամներից մի քանիսին, որոնք ապաւինեցին ազգութ. կոմիտարիատի շէնքը և ունեցան գաղտնի խորհրդակցութիւններ Սարօկինին տապալելու համար:

Հաղարաւոր հայաստանցիներ մտան խորհուրդների բանակի մէջ, կուելու հակազեղափոխական աւազակախմբերի դէմ, ամրապնդելու Խորհուրդների իշխանութիւնը հիւսիսային Կովկասում, այն վառ տենչերով, որ մօտիկ ապագայութ Անդրկովկասով պիտի արշաւեն դէպի ցած, դուրս մղելու իմպերիալիստական հօրդաները և հաստատելու Հայաստանում Խորհրդային իշխանութիւն:

Սոխումում, բանւորա-գիւղացիական կառավարութեան նահանջից յետոյ, մինչեւ այսօր էլ լեռները ապաւինած հարիւրաւոր հայաստանցիներ, կազմած պարտիզանական խմբեր, դէնքերը ծեռներին սպասում են Ռուսաստանի բոլշևիկական զօրագնդերի մօտենալուն:

Եւ զիտենք այսօր, թէ ինչպէս Վրաստանի, Աղբէջանի և Հայաստանի ծաղրաշարժ «հանրապետութիւնները» բայթայում են օր աւորք:

Երեկւայ բարեկամ մենշևիզմն ու գաշնակցութիւնը այսօր պատերազմում են իրար դէմ և թափում եղբարական ժողովուրդների արիւնը:

Անդրկովկասն ու Հայաստանը անզլիական իմպերիալիստների խաղերով պատառ-պատառ եղած, այսօր ներկայացնում են բազմաթիւ մանր ու պատիկ «հանրապետութիւններ», որոնք անկի պէս բանում և անհետանում են ինչ օր մողական գաւազանով:

Հայաստանի, Վրաստանի, Աղբքէջանի հանրապետութիւններին» աւելացնենք Աշարայինների «Ախալքալաք-Ախալցիսալի հանրապետութիւնը», որը իր 300 հետեւակ և 100 ծիաւոր «զօրքով» չարգում է վրացական «գնդերը» և հաստատում նոր իշխանութիւն:

Յիշենք «Արաքսի հանրապետութիւնը», որի մէջ մտնում է «Աղուլիսի հանրապետութիւնը», «Կարսի իշխանութիւնը», անդիական կօմենդանտով: «Շարուր-Դարալազդեալի հանրապետութիւն» դինւած ուժերով (Հայաստանի հանրապետութեան) դէմ:

Դարաբազ... կուախնձոր Հայաստանի և Աղբքէջանի միջև, երկու հանրապետութիւնների երկու գեներալ-գուբերնատորներով, և այսպէս անվերջ:

Ահա Անդրկովկասի գեմոկրատական այն մէկ ֆրոնտը, որի համար այնպէս կանչում էին մենչեղմն ու գաշնակցութիւնը:

«Դեմոկրատիալի մէկ ֆրոնտ»—ամենուրեք աշխատաւոր մասսաների հոսող արիւն...

Մակայն մենք լսում ենք արգէն, որ Վրաստանի, Հայաստանի ու Աղբքէջանի աշխատաւոր դասերի համբերութեան բաժակը լցուած է: Եթէ ոչ այսօր, վաղն անշուշտ, նրանք հանդէս պիտի գան զինւած ուժերով և նո՞ր, յեղափոխական թափով անդօ-ամերիկական իմպերիալիստներից կաշառւած բոլոր նացիոնալիստների դէմ:

Կոմմունիզմի հզօր ալիքները բարձրանում են Սև և Կապից ծովի ափունքներից. որպէս արձագանք՝ յեղափոխական ալեակների ծափերը դեռ ևս մեղմիւ մեղ են հասնում Հայաստանից:

Հայ մանր-բուրժուազիան կորցնելով առաջնութեան գափնին, խելացնորութեան և մտորումների շրջանն է ապրում: Նրա շարքերը փլչում են ու փլչում: Տերրորը մուտք է գործել նրանց (առբազան) ընտանիքի մէջ: Դաշնակց. Արեւելեան բիւրոյի նախագահ և Անդրկովկասի երեմնի մինիստը կարճիկեան

գլորւում է իւրաքինների գնդակից: Հայ նացիոնալիզմի խրախնանքի ֆինալն է, անկասկած:

Մանր-բուրժուազիան դաշնակցութիւնը բալքարելով ներքուստ, տեղի է տալիս համ խոշոր բուրժուազիակին:

Դրամատէր Պօղոս-Նուբար փաշա, յայտնի անդիական լակէյ, և թութունի Փարրիկանտ ինֆիաշեան, ամենայն հայոց սեազուխների շէֆ կաթողիկոսի օրհնանքներով և գաշնակցութեան կլակեօրութեամբ, այսօր կառավարում են «Հայաստանի ժողովուրդներին», անդիական գեներալների մարակների տակ և անդիական կօմենդանտներով:

Կամկած չկայ, որ անդիական փայլուն ոսկիները կարող են կուրացնել միայն մի շարք պնակալէզների:

Սակայն անդիական իմպերիալիզմն ընդունակ է խլել հայ աշխատաւորութեան վերջին պատառ հայր և սովի ու հիւանդութիւնների մատնել ամրող ժողովուրդը. այդ են ասում վերջին ամենաստոյգ տեղեկութիւնները, բաղւած հէնց իրենց նացիոնալիստներից:

Հայաստանի ժողովուրդները տասնեակ հազարներով մեռնում են սովի և հիւանդութիւնների նիրաններում:

Հայաստանի մանուկները շների կոծած ոսկոռներն են խլում:

Մեռածների դիակները անտէր-անտիրական ընկած են փողոյներում, հաւաքող չկայ, թաղող չկայ...

Իսկ «մարդաբանէր» անդիակայինները, «փառապանձ գաշնակիցները» խուլ են ծեւանում, քոռ են ծեւանում:

Հայաստանի կառավարչական կուսակցութիւն այեղափոխական» գաշնակցութիւնը մուրացկանութեան է դիմել «Յառաջի» էջերում, հայ բուրժուազիայի սեղանի փշրանքները ժողովելու և տասնեակ կոպէկներով 800,000 հայ սովեալներին մահւան հանկերից փրկելու:

Հայաստանի աշխատաւոր ժողովուրդը հաց, հաց և հաց է աղաղակում: Տասնեակ հազարներով մեռնողների և Հայա-

տանի մանուկների սրտամորմոք ճիշերը կրկնակի ատելութեամբ լցնում են Հայաստանի կոմմունիստների հողին դէպի այն հրէշները, որոնք ժողովրդական այս անլուր թշւառութեան պատճառը դարձան:

Հայաստանի կոմմունիստների վրայ, այսօր աւելի քան երբէք, ընկնում է մի սուրբ պարտականութիւն, համախմբել իրենց շարքերը, տասնապատկել իրենց եռանդն ու աշխատանքը, օր առաջ խորտակելու անարգ կապիտալիստների և իմպերիալիստների լուծը, օդնութեան հասնելու անհետացող ժողովրդին:

Հայաստանի ժողովուրդները սրտատրով սպասում են դաւիք մեսսիակին:

Սպասող մեսսիան—դա յաղթական բոլշևիզմն է:

Հայաստանի ժողովուրդների աշխատաւոր դասակարգերն անխտիր պիտի հաւաքւին կոմմունիզմի կարմիր Դրօշակի շուրջ:

—Հայաստանի՝ կոմմունիստներ, դէպի նվիրական աշխատանք:

III Կոմմունիստական ինտերնայֆոնալը, միջաղգալին բանաւորական միութիւնը, մեղ մղում է դէպի գործ:

Մասնակցելով Յ-րդ կոմմունիստական ինտերնայֆոնալի կոնգրեսին, մտնելով նրա վսեմ ու անաղարտ ընտանիքի մէջ, Հայաստանի կոմմունիստական կուսուկցութիւնը, բանաւորների և գիւղացիութեան միակ ու հարազատ ներկայացուցիչը, այս միջաղգալին ամբիոնից տալիս է հանդիսաւոր խոստում, որ նա զէնքը վայր չի դնիլ իր մեռքից, մինչև որ Հայաստանի աշխատաւոր դասակարգերը չեն խորտակի բուրժուաների և իմպերիալիստների անարգ լուծը, մինչեւ որ Հայաստանում չի հաստատւի Խորհուրդների Խշանութիւն. և մինչեւ որ Հայաստանի սարերում ու հովիտներում չի ծածանւի կոմմունիզմի յաղթական գրօշը՝ միջաղգալին հիմնի ներդաշնակ հնչիւնների հետ:

Դիմելով մեղ, բոլոր երկրների կոմմունիստական կուսակ-

ցութիւնների, ընկեր պատգամաւորներ, Հայաստանի կոմմունիստական կուսակցութիւնը ողջունում է միջաղգալին պրոլետարիատին, նրա հերոսական կուսի մէջ՝ իր ամենազնիւ ու անժնւեր ներկայացուցիչներով:

Վերադառնալով մեր երկրները, բանւոր դասակարգի մօտ, ընկեր պատգամաւորներ, պատմեցէք նրանց, որ հեռան Փոքր-Ասիայում, Հայաստան կոչւող տերիտորիայում կան նմանապէս արիւնաբամ ժողովուրդներ, որոնց մէջ արդէն մուտք է գործել կոմմունիզմի լուսաւոր դաղափարը, և որ այդ ժողովուրդների արթնացած խաւերն ընթանում են համաշխարհային պրոլետարիատի ընդգծած ուղիով:

Պատմեցէք նրանց, որ Հայաստանի կոմմունիստները ապրում ու ոգեսորւում են միջաղգալին պրոլետարիատի տարած նորանոր լաղթանակներով:

Հայաստանի Կոմմունիստական կուսակցութիւնը, ընկերներ, իր բաղտը վերջնականապէս կապել է մեղ հետ:

Զեղ հետ միասին մենք կերթանք տուած, դէպի կոմմունիզմ:

Վերստին ողջունելով Զեղ և մեր ամենքիս սրբազան միութիւն Յ-րդ կոմմունիստական ինտերնայֆոնալը—

Հայաստանի կոմմունիստական կուսակցութիւնը այս միջաղգալին ամբիոնից յախարարում է ի լուր աշխարհի.

Որ եւրոպական գիշատիչ պետութիւնների «հովանաւորութիւնը» գարծել է մի անարգ լուծ Հայաստանի ժողովրդների վղին:

Սւազակ իմպերիալիստների «միջամտութեան» հետեւանըով Հայաստանը վերջնականապէս ամայանում է իր ժողովուրդներից: Տասնեակ հազարաւոր դիակներ այսօր անտիրական թափւած են քաղաքների և զիւղերի փողոցներում: Նները լափում են սովից և հիւանդութիւններից մեռածների մարմինները, իսկ Հայաստանի սովալլուկ մանուկները շների ձեռքից ուկոռներն են խլում: Միլիոնաւոր ազգարնակչութիւնը յուսա-

հատ ու անդօր կահգնած է արդեն սովի և մահւան ուրւականի առաջ:

Հայաստանի աշխատաւոր դասակարգերը, արիւնաքամ եղած համաշխարհալին իմպերիալիստների ծեռքով, վճռականապէս բողոքում են ամեն մի իմպերիալիստական միջամտութեան դէմ Հայաստանի գործերում:

«Կորչե՞ն Հայաստանից իմպերիալիստների աւազակախմբերը.

«Հայաստանը — Հայաստանի ժողովուրդներին.

Միարերան աղաղակում է անհետացող Հայաստանը:

Հայաստանի Կոմմունիստական կուսակցութիւնը յայտարում է կեանքի և մահու կոիւ անդլօ-ամերիկական դիշատիչներին:

2) Վիլսոնների և Լոյլ Ջորջերի «Ազգութիւնների լիդացին» երկրպագու և նրանց զուգընթաց ընթացող Բեռնի դեղին ինտերնացիոնալում բազմած հայ «սոցիալիստները» բնաւ չեն հանդիսանում Հայաստանի բանոր դասակարգի և զիւղացիութեան արտայատիւր:

Բեռնի «հայ սոցիալիստները» պատկանում են այն սոցիալդաւանների շարքին, որոնք անամօթաբար իրենց ծեռքերը թաթախեցին հարիւր-հազարաւոր աշխատաւորների անմեղ արեան մէջ:

Բեռնի «հայ սոցիալիստները» անդլօ-ամերիկական իմպերիալիստների հլու վարձկաններն են:

Եւրոպական իմպերիալիստների և սոցիալ-խուլիդանների դռները մաշտ՝ «պատգամաւորութիւնները» զրանք Հայաստանի թալանչիներն են, որոնք ստորաբարշ, եւրոպական կուրուտներում լափում են Հայաստանի ժողովրդների հայալ քրաինքը:

Այդ գաղտագողի «պատգամաւորութիւնները» չեն արտայայտում Հայաստանի ժողովուրդների իդերը և չեն լիազօւած նրանցից:

Իրանք գախուսափ դիմող գեներալներն են՝ առանց զօրքերի:

Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութիւնը ժողովրդական հոծ մասսաների առաջ անարգանքի սրւնին պիսիդամի այդ բոլոր սոցիալդաւաններին և «ազգային պատւիրակներին»:

3) Հայաստանի «հանրապետութիւնը» — դա անամօթ մի ժաղը է Հայաստանի բանւորների և զիւղացիների հասցէին:

Հայաստանի «հանրապետութիւն», դա Հայաստանի ժողովուրդների նշմարիա ինքնորոշման խայտառակ կեղծումը, ֆալսիֆիկացիան է:

Հայաստանի «հանրապետութեան» մէջ պաօր ինքնորոշւած են հայ բուրժուազիան և հայ կղերականութիւնը:

Հայաստանի «կառավարութիւն» — դա հայ աւազակների, դրամաշորթների և գահնապետների բռնապետութիւնն է:

Հայաստանի «մինիստրներ» — զբանք հայ ժողովրդի տականք, անդլօ-ամերիկական իմպերիալիստների կու ծառայ, մարդակեր գալլերն են:

Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութիւնը իր ժողովուրդների անունով երդեւէ է բնաշինչ անել աշխարհի երեսից այդ բոլոր շներին:

Վերջացնելով մեր խօսքը, ընկերներ, Հայաստանի աշխատաւոր զանգւածների կամքով մեր երիտասարդ կոմմունիստական կուսակցութիւնը ձայնակցում է Զեղ հետ.

Կորչի՞ իմպերիալիզմը.

Կեցցէ՞ բազարացիական կոիւր.

Կեցցէ՞ Յ-րդ Կոմմունիստական ինտերնացիոնալը.

Կեցցէ՞ Կոմմունիզմը:

Երրորդ Կոմմուն, ինտերնաց պատգամաւոր և Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ

2013



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԸ. ԿՈԽԱԿԻ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ  
ԼՈՅԾ ԵՆ ՏԵՍԵԼ

288

- 1) Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցութեան (Բոլշևիկների)  
Մրագիրը:
- 2) III հնտերնացիոնալի Մանկֆեստը:
- 3) Ն. Լենին. «Թեզիսներ» բուրժուական և պրոլետարական դեմո-  
կրատիայի մասին»—գինը՝ 50 կոպ.
- 4) Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան ներկայացուցիչի գե-  
կուցումը III Կոմմունիստական խոտերնացիոնալին—գինը՝ 60 կոպ.:

ՀԱՅԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ  
ԼՈՅԾ ԵՆ ՏԵՍԵԼ

- 1) Ի. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրապետութեան Սահմանադրու-  
թիւնը:
- 2) Ն. Լենին. «Նամակ Ամերիկեան բանուոներին»—գինը՝ 1 րուբ.
- 3) Վ. Ֆրիջէ. «Պրոլետարական պոէմիան»—գինը՝ 2 ր.
- 4) Զիջերին. «Բրեստից յիտոյ» (Ջեկուցում Խորքուրդների 5-րդ  
Համագումարին) —գինը՝ 1 րուբ.
- 5) Ներչլակ. «Դէպքերը Բագրում, Հ. Յ. Դաշնակցութիւնը և Բագրի  
Խորհրդային հշիանութիւնը»:
- 6) Ն. Լենին. «Կարլ Մարքս» (Համառոտ կինսագրութիւնը և մարք-  
սիզմի շարադրութիւնը)—գինը՝ 1 ր. 50 կ.
- 7) Ներչլակ. «Ռուսական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակ-  
տիկան»—գինը՝ 1 ր.
- 8) Ն. ԲՈՒԽԱՐԻՆ. «Կոմմունիստների ծրագիրը»—գինը՝ 3 ր.
- 9) Մ. ՊԱԽԼՈՎԻՉ (Վետման) «Ասիան և իր դերը համաշխարհա-  
յին պատերազմի մէջ»—գինը՝ 3 ր.
- 10) ԿԱՐԼ ՌԱՅՆԵԿ. I. «Կոմմունիստական Կուսակցութիւնը Գեր-  
մանիայում», II. «Կարլ Լիբկնեխտ» (Լիբկնեխտի նկարով)—գինը՝ 1 ր.
- 11) «Խորհրդային նաուազարութեան նօտան Վիլսոնին»—գինը՝ 75 կ.
- 12) «Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրութիւնը»—  
գինը՝ 2 րուբ.
- 13) Հ. ՅՈՎԱԷՓԵԱՆ. „Դէպի բաղաքացիական կոիւ“:
- 14) Գ. ԶԻՆՈՎԵԻ, Ի. ԿԱՐԵՆԵԿ և Լ. ՏՐՈՅՆԿԻ—„Ն. Լենին“  
(Վլադիմիր Իլիչ Ռուսանով) —գինը՝ 2 ր.
- 15) Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. ԷՆԴԵԼՇ. «Կոմմունիստական Մանկֆեստ»—  
Պլեխանովի, Կառուցկու և Անդրեակների առաջարաններով—գինը՝ 3 ր.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

- 1) ԿԱՐՊԻՆՈՒԿԻ. „Ի՞նչ բան է Խորհրդային հշիանութիւնը և ինչ-  
պէս է նա կազմւում“:
- 2) Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը:
- 3) Պ. ԼԱՑԱՐԻ. Տնտեսական Եւոլիցիա և Կոմմունիզմ:

